ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-00-70,
Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, Էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

թիվ 118-19
14 փետրվարի, 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ Ա. Ղուկասյանին

Հարգելի՝ պարոն Ղուկասյան,

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 2019 թվականի N 20-Ա, N 21-Ա, N 22-Ա, 23-Ա և N 24-Ա որոշումները:

Առդիր՝ 5 էջ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Վ. Ձավարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

11 փետրվարի 2019 թվականի, N 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԾԱԳ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-020-033-000021 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

որոշում եմ.

1. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Արևաձագ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-020-033-000021 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.151 հեկտար մակերեսով հողամասին և հողամասում գտնվող բնակելի տանը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական համար 768842) տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Արևաձագ գյուղի 1-ին փողոցի, փակուղի 1, տուն 2 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019թ., փետրվարի 11,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

11 փետրվարի 2019 թվականի, N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0005-0047 ԵՎ 06-014-005-000006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշման՝

որոշում եմ.

1. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, միավորել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Այգեհատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-014-0005-0047 ծածկագրով, 0,026 հեկտար մակերեսով հողամասը, 228 քառակուսի մետր մակերեսով, Օձուն համայնք, գյուղ Այգեհատ, փողոց 1, թիվ 10/2 հասցեում գտնվող մառանը (վկայական թիվ 06022019-06-0046) և 06-014-005-000006 ծածկագրով, 0,105 հեկտար մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման, Օձուն համայնք գյուղ Այգեհատ, փողոց 3, թիվ 4 հասցեում գտնվող տնամերձ հողամասը (վկայական թիվ 846468) և տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ գյուղի 1-ին փողոցի, թիվ 10/3 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019թ., փետրվարի 11,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

11 փետրվարի 2019 թվականի, N 22-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԾԱԳ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-020-0028-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու եվ (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման՝

որոշում եմ.

1. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կազմի մեջ մտնող Արևաձագ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-020-0028-0001 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական հողամասին և հողամասում գտնվող շինություններին (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական համար 1822075) տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Արևաձագ գյուղի 3-րդ փողոցի, շենք 1 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019թ., փետրվարի 11,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

11 փետրվարի 2019 թվականի, N 23-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 24-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ի հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի առաջին մասի չորրորդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 8-ի N 329-Ա հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 26-Ա հրամանը՝

որոշում եմ.

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 24-Ա որոշման առաջին կետով հաստատված N 15 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.3-1) համայնքային ծառայության պաշտոնի անձնագրի, գործողությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019թ., փետրվարի 11,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2019 թվականի, N 24-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԷԼԵՆ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի երկրորդ մասի երկրորդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 33-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 41-րդ և 42-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» 109-րդ հոդվածի, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 3-րդ և 24-րդ հոդվածների՝

որոշում եմ.

հիմք ընդունելով Օձուն համայնքի բնակիչ Սուսաննա Բեժանյանի 31.01.2019թ. դիմումը, ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 13-ի <<Անչափահաս Էլեն Սեյրանի Հարությունյանի նկատմամբ հոգաբարձություն սահմանելու մասին>> եզրակացությունը.

1. Օձուն համայնքի Օձուն գյուղի բնակիչ Սուսաննա Սենոյի Բեժանյանին՝ ծնված 28.02.1957թ., նշանակել իր թոռան՝ Էլեն Սեյրանի Հարությունյանի՝ ծնված 26.08.2004թ., ծննդյան վկայական ԱԱ N 018848, հոգաբարձուն:

2. Անչափահաս Էլեն Սեյրանի Հարությունյանի նկատմամբ հոգաբարձությունն առանց հատուկ որոշման դադարելու է նրա տասնութ տարին լրանալիս, ինչպես նաև մինչև չափահաս դառնալը՝ նրա ամուսնության և լրիվ գործունակություն ձեռք բերելու և օրենքով սահմանված այլ դեպքերում:

3. Սուսաննա Սենոյի Բեժանյանը այսուհետ համարվում անչափահաս Էլեն Սեյրանի Հարությունյանի օրինական ներկայացուցիչը և օրենքի ուժով և նրա անունից ու ի շահ նրա, առանց հատուկ լիազորության կարող է կնքել բոլոր անհրաժեշտ գործարքները, հանդես գալ նրա իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

4. Հոգաբարձու Սուսաննա Սենոյի Բեժանյանի իրավունքները և պարտականությունները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

5. Սույն որոշմամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2019թ., փետրվարի 14,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն